Ողորմութեամբն Աստուծոյ
ի լոյս ընծայեալ յառաջաձեռնութեամբ
Տ. Եմմանուէլի Վարդապետի Աթաջանեան
վասն հոգեւոր պիտոյից հաւատացելոց
Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:
Ի սուրբ աղօթս ձեր
յիշեսցուք զազգն մեր,
որ սերեալ գայ յարդարոյն Նոյէ եւ ի Յաբեթէ.
զՏունն Թորգոմեան,
զՍեռն Ասքանազեան, զՏոհմն Արամեան
եւ զՆահապետն մեր մեծ Հայկ:
Նաեւ զաշխատողս եւ նպաստամատոյց
օգնականս ձեռնարկին, որոց զանունս Տէրն
գիտէ. յիշեսցուք յաղօթս ձեր, զի ողորմեսցի
ըստ բազում ողորմութեան Իւրում
եւ մի մտանիցէ ի դատաստան, այլ փրկեսցէ
ի յաւիտենական հրոյն եւ արժանաւորեսցէ
լսել զերանաւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութիւնն:
Աջ Տեառն Ամենակալին
պահապան լիցի զարմիս Հայկազեան
եւ ամենայն քրիստոնէից ուղղափառաց.
ամէն:

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

ԱՆՈՒԱՄԲ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՈՒ
ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ
ԱՄԷՆ

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
սուրբ թո՛ղ լինի Քո անունը:
Քո արքայութիւնը թո՛ղ գայ:
Քո կամքը թո՛ղ լինի
ինչպէս երկնքում է՝ եւ երկրի վրայ:
Մեր հանապազօրեայ հացը
տուր մեզ այսօր,
եւ թո՛ղ մեզ մեր պարտքերը,
որպէս եւ մենք ենք թողնում
մեր պարտապաններին:
Եւ մի՛ տար մեզ փորձութեան,
այլ փրկի՛ր մեզ չարից,
քանզի Քոնն է արքայութիւնը
եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս,
ամէն:

МОЛИТВА ГОСПОДНЯ

ВО ИМЯ ОТЦА И СЫНА
И ДУХА СВЯТОГО
АМИНЬ

Отче наш, сущий на небесах,
Да святится имя Твое;
да приидет Царствие Твое;
да будет воля Твоя как на небе,
так и на земле.
Хлеб наш насущный
дай нам на сей день;
и прости нам долги наши,
как и мы прощаем
должникам нашим.
И не введи нас в искушение,
но избави нас от лукавого,
ибо Твое есть Царство, и сила,
и слава, во веки веков.
Аминь.

ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ
(ԲԱՆ ԽԱ.)
ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Աստուծոյ կենդանարար Որդի, օրհնեալ ամէն ինչում, ահաւոր Հօրդ անքնին ծնունդ, երբ ծագում է Քո փառքի ողորմութեան անստուեր նշոյլը՝ հալածւում դեւերը, հալչում են մեղքերը, ջնջւում են յանցանքները, խզւում են կապանքները, խորտակւում են շղթաները, կենդանանում են մահացածները, բժշկւում են հարուածները, ողջանում են վէրքերը, վերանում են ապականութիւնները, տեղի են տալիս տխրութիւնները, նահանջում են հեծութիւնները, փախչում է խաւարը, պարզւում է մէգը, ցրւում է մառախուղը, փարատւում է մռայլը, սպառում է աղջամուղջը, վերանում է մութը, հեռանում է գիշերը, տարագրւում է տագնապը, չքանում է չարիքը, հալածւում են յուսահատութիւնները, եւ թագաւորում

МОЛИТВА СЫНУ БОЖЬЕМУ
(Глава 41)
ИЗ ГЛУБИН СЕРДЦА БЕСЕДА С БОГОМ

Всеблагословенный Сын Бога живого, неисследимое порождение грозного Отца, для Тебя нет ничего невозможного. Когда восходит незатмимое сияние славы милосердия Твоего, тают грехи, изгоняются бесы, стираются прегрешения, спадают оковы, рвутся цепи, оживают мертвые, исцеляются хворые, заживают раны; искореняется скверна, исчезают печали, отступают стенания, убегает тьма, удаляется мрак, рассеивается туман, изгоняется те́мень, пропадают сумерки, исторгается темнота, проходит ночь, прогоняется тревога, исчезает зло, преследуется отчая-

Է Քո ձեռքն ամենակարող, քաւիչդ ամենայնի:

Որ չեկար կորստեան մատնելու, մարդկանց հոգիները, այլ ապրեցնելու, ների՛ր իմ անթիւ չարիքները Քո բազում ողորմութեամբ, քանզի Դու ես միայն երկնքում անճառ, եւ երկրում անզնին, գոյի տարրերում եւ աշխարհի բոլոր կողմերում, սկիզբն ամենայնի եւ ամէն ինչում ամենայն լրմամբ, օրհնեալ բարձունքներում, եւ, Քե՛զ, Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

ние, владычествует всесильная длань Твоя, о искупитель всех.

Ты пришел не погубить души людские, но даровать жизнь. Отпусти мне бесчисленные грехи мои по великому милосердию Твоему, ибо лишь Ты один — неизречен на небе и неисследим на земле, в стихии бытия и во всех краях вселенной, начало всего и наличие всего во всей полноте, Благословенный в вышних, и Тебе с Отцом и Духом Святым подобает слава вовек. Аминь.

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԱՂՕԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ

(ԲԱՆ ԽԲ., Բ)

ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Օրհնեա՛լ, օրհնեա՛լ եւ դարձեալ օրհնեա՛լ, ընդունելով եւ ինձ նոյն հաւատքով կանգնեցրո՛ւ կործանումից, բարերա՛ր, բժշկի՛ր ախտերի այս հիւանդութիւններից, ողորմա՛ծ. մահուան եզերքից դարձրու դէպի կեա՛նք, կենդանութիւն: Քոնն եմ նաեւ ես, ապրեցրո՛ւ նրա հետ, ապաւինութիւն: Անձամբ մեռածիս կենդանութեան շո՛ւնչ ընծայիր՝ յարութիւն, կեանք, անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, ամենազօր աջ, ամենիշխան ձեռք, ամենամերձ մատ: Կամեցի՛ր, Տէ՛ր, եւ ես կփրկուեմ. նայի՛ր միայն գթութեամբ, եւ կարդարանամ. ասա՛ խօսքով, եւ իսկոյն անարատ կդառնամ: Մոռացի՛ր իմ չարիքների թիւր, եւ վերստին համարձակութիւն կստանամ, առատաձեռնի՛ր եւ անմիջապէս Քեզ կպատուաստուեմ, փառաւորեալդ ամեն ինչում յաւիտեանս. ամէն:

СВ. ГРИГОР НАРЕКАЦИ

МОЛИТВА СЫНУ БОЖЬЕМУ

(Глава 42, II)

ИЗ ГЛУБИН СЕРДЦА БЕСЕДА С БОГОМ

Благословен, благословен и вновь благословен! Принимая и меня в той же вере, восставь меня от погибели и возвысь, о благодетельный, исцели от скверны недугов, о милосердный. От берегов смерти верни меня в жизнь, о жизнедавец. Я тоже Твой, спаси и меня, о упование; даруй дыхание живое мне, умершему душой, о Ты, воскресение, жизнь и бессмертие, неиссякаемое добро, неистощимая милость, неизменное прощение, всемогущая Десница, всевластная Длань, вседоступный Перст. Пожелай, Господи, и я буду спасен, окажи лишь милосердие, и буду оправдан, молви лишь слово, и тотчас стану непорочен. Забудь число злодеяний моих, и тотчас обрету мужество; расщедрись, и сразу привьюсь к Тебе, о прославленный во всем навеки. Аминь.

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԱՂՕԹՔ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՒԱՏԱՑՈՂ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻ

Ա

Հաւատով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ, Հա՛յր եւ Որդի՛ եւ Սո՛ւրբ Հոգի, անեղ եւ անմա՛հ բնութիւն, հրեշտակների եւ մարդկանց եւ բոլոր եղածների՛ Արարիչ: Ողորմի՛ր ինձ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ, անբաժանելի Լո՛յս, միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, Արարի՛չ լոյսի եւ հալածիչ խաւարի, հալածի՛ր իմ հոգուց մեղքերի եւ անգիտութեան խաւարը եւ լուսաւորի՛ր իմ միտքն այս ժամին՝ աղօթելու Քեզ հաճոյքով եւ ընդունելու Քեզանից իմ խնդրանքները: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

СВ. НЕРСЕС ШНОРАЛИ

МОЛИТВА ДЛЯ КАЖДОГО ВЕРУЮЩЕГО В ХРИСТА

I

С верою исповедую Тебя и поклоняюсь Тебе, Отец и Сын и Дух Святой, несотворенная и бессмертная Сущность, Творец ангелов и людей и всего сущего. Помилуй меня многогрешного.

II

С верою исповедую Тебя и поклоняюсь Тебе, нераздельный Свет, единосущная Святая Троица и единое Божество, Творец света и гонитель тьмы. Изведи из души моей тьму грехов и неведения и просвети мысль мою в сей час, дабы молиться Тебе радостно и принять от Тебя просимое мною. И помилуй Твои создания и меня многогрешного.

Գ

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն մոլորուած ոչխարիս փնտրելու համար, մեղայ երկնքի եւ Քո առաջ, ընդունի՛ր ինձ որպէս անառակ որդուն եւ հագցրո՛ւ ինձ առաջին պատմուճանը, որից մերկացայ մեղքի պատճառով: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Դ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ հայրական ծոցից իջար եւ մարմին առար սուրբ Կոյս Մարիամից մեր փրկութեան համար, խաչուեցիր, թաղուեցիր եւ յարութիւն առար մեռելներից եւ փառքով համբարձուեցիր Հօր մօտ. մեղանչեցի երկնքի եւ Քո առաջ, յիշի՛ր ինձ, որպէս աւազակին, երբ գաս Քո արքայութեամբ: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Ե

Հոգի Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ իջար Յորդանան եւ Վերնատուն եւ լու-

III

Отец небесный, Бог истинный, пославший возлюбленного Сына Твоего на поиски заблудшей овцы! Согрешил я пред небом и пред Тобою; прими меня, как Блудного сына, и обряди в первое одеяние, совлеченное с меня грехом. И помилуй Твои создания и меня многогрешного.

IV

Сын Божий, Бог истинный, исшедший из Отчего недра и принявший плоть от святой Девы Марии ради спасения нашего, распятый и погребенный и воскресший из мертвых и вознесшийся в славе к Отцу! Согрешил я пред небом и пред Тобою. Помяни меня, как разбойника, когда придешь в Царстве Твоем. И помилуй Твои создания и меня многогрешного.

V

Дух Божий, Бог истинный, сшедший на Иордан и на Горницу и просветивший

սաւորեցիր ինձ սուրբ Աւազանի մկրտութեամբ. մեղայ երկնքի եւ Քո առաջ, մաքրի՛ր ինձ վերստին Քո աստուածային հրով, ինչպէս հրեղէն լեզուներով սուրբ առաքեալներին. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Զ

Անե՛ղ բնութիւն, մեղանչել եմ Քո առջև իմ մտքով, հոգով եւ մարմնով, յանուն Քո սուրբ անուան մի՛ յիշիր իմ նախկին մեղքերը: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Է

Ամեն ինչ տեսնո՛ղ, մեղայ Քեզ խորհրդով, խօսքով եւ գործով, ջնջի՛ր ձեռագիրն իմ յանցանքների եւ գրի՛ր իմ անունը կեանքի գրքում: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Ը

Գաղտնիքնե՛ր քննող, մեղանչել եմ Քո առջև իմ կամքով և ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութի՛ւն շնորհիր

меня крещением святой купели! Согрешил я пред небом и пред Тобою. Очисти меня вновь Твоим божественным огнем, как святых апостолов - огненными языками. И помилуй Твои создания и меня многогрешного.

VI

Несотворенная сущность! Согрешил я пред Тобою мыслями, душою и телом. Во имя святое Твое, не вмени мне грехов моих прежних. И помилуй Твои создания и меня многогрешного.

VII

Всевидящий! Согрешил я пред Тобою помыслом, словом и делом. Сотри рукопись прегрешений моих и впиши имя мое в книгу жизни. И помилуй Твои создания и меня многогрешного.

VIII

Тайноведец! Согрешил я пред Тобою вольно и невольно, осознанно и неосознанно. Даруй мне грешному отпуще-

մեղաւորիս, քանզի սուրբ Աւազանի ծնունդից մինչեւ այսօր մեղք եմ գործել Աստուածութեանդ առջև իմ զգայարաններով եւ մարմնիս բոլոր անդամներով: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Թ

Ամենախնա՛մ Տէր, իմ աչքերին պահապա՛ն դիր Քո սուրբ երկիւղը՝ այլեւս արատութեամբ չնայելու, եւ ականջներիս չախորժելու լսել չարութեան խօսքեր, եւ բերանիս՝ սուտ չխօսելու, եւ սրտիս՝ չարը չխորհելու, եւ ձեռքերիս անիրաւութիւն չգործելու, եւ ոտքերիս անօրինութեան ճանապարհով չընթանալու, այլ ուղղի՛ր սրանց շարժումը միշտ լինելու ըստ Քո պատուիրանների: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

Ժ

Հո՛ւր կենդանի Քրիստոս, Քո սիրոյ հուրը, որ ուղարկեցիր երկրի վրայ, բորբոքի՛ր իմ անձում, որպէսզի այրի իմ հոգու ախտերը եւ սրբի իմ խղճմտանքը, եւ մաքրի իմ մարմնի մեղքերը եւ իմ սրտում վառի

ние, ибо от рождения святой купелью по сей день грешил я пред Божеством Твоим всеми чувствами моими и всеми членами тела моего. И помилуй Твои создания и меня многогрешного.

IX

Господь всеохранитель! Поставь на стражу глаз моих страх Твой святой, дабы более не смотрели вожделенно, и ушей моих, дабы не восхотели внимать злобным речам, и уст моих, дабы не произносили лжи, и сердца моего, дабы не замышляло зла, и рук моих, дабы не творили неправедности, и ног моих, дабы не ходили путями беззаконными, но направь их движение, быть всегда им в согласии с заповедями Твоими. И помилуй Твои создания и меня многогрешного.

X

Огонь живой Христос! Воспламени во мне пролитый на землю огонь любви Твоей, дабы он сжег пороки души моей и омыл совесть мыслей моих и очистил грехи плоти моей и воспламенил в серд-

Քո գիտութեան լոյսը: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԱ

Հո՛ր իմաստութիւն Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ ամեն ժամ Քո առջեւ բարին խորհելու, խօսելու եւ գործելու, եւ փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խօսքերից եւ գործերից: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԲ

Բարի՛ք կամեցող, Տէ՛ր կամարար, մի՛ թող ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնորդի՛ր ինձ միշտ լինել ըստ Քո բարեսէր կամքի: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԳ

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ Քո արքայութիւնը, որը խոստացար Քո սիրելիներին, եւ զօրացրո՛ւ իմ սիրտը՝ ատելու մեղքը եւ միայն Քեզ սիրելու եւ Քո կամքը կատարելու: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

це моем свет познания Твоего. И помилуй Твои создания и меня многогрешного.

XI

Премудрость Отца Иисус! Дай мне мудрости мыслить, изрекать и творить добро пред Тобою ежечасно. От злых помыслов, слов и дел спаси меня. И помилуй Твои создания и меня многогрешного.

XII

Господь-доброжелатель! Не дай мне следовать собственной воле, а веди меня, дабы следовать всегда добродетельной воле Твоей. И помилуй Твои создания и меня многогрешного.

XIII

Царь небесный! Даруй мне царство Твоё, обещанное Тобой возлюбленным Твоим; и укрепи сердце мое в ненависти ко греху и в любви лишь к Тебе и в исполнении воли Твоей. И помилуй Твои создания и меня многогрешного.

ԺԴ

Խնամո՛ղ արարածների, պահիր Քո խաչի նշանով իմ հոգին եւ մարմինը՝ մեղքերի պատրանքներից, դեւերի փորձութիւններից, անիրաւ մարդկանցից եւ հոգու եւ մարմնի բոլոր վտանգներից. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ

Պահապա՛ն ամենայնի Քրիստոս, Քո աջը թո՛ղ հովանի լինի ինձ վրայ ցերեկ եւ գիշեր, տանը նստելիս, ճանապարհի գնալիս, ննջելիս եւ արթնանալիս, որպէսզի երբեք չսասանուեմ (Սղմ. ԺԵ 8): Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԶ

Աստուա՛ծ իմ, որ բացում ես ձեռքերդ եւ լցնում բոլոր արարածներիդ Քո ողորմութեամբ, Քեզ եմ յանձնում իմ անձը, Դո՛ւ հոգա եւ պատրաստիր իմ հոգու եւ մարմնի կարիքները այսուհետեւ մինչեւ յաւիտեան: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

XIV

Попечитель созданий! Охрани знамением Креста Твоего душу мою и тело мое от греховных соблазнов, от дьявольских искушений, от людей неправедных и всех угроз душе моей и телу. И помилуй Твои создания и меня многогрешного.

XV

Всеохранитель Христос! Да Будет мне сенью десница Твоя днем и ночью, находясь дома и в пути, во сне и наяву, дабы остаться мне непоколебимым вовек (Пс. 15:8). И помилуй Твои создания и меня многогрешного.

XVI

Боже мой, отверзающий длань Твою и наполняющий все сущее милостью Твоею! Тебе препоручаю душу мою, Ты заботься и пекись о нуждах души моей и тела отныне и до скончания века. И помилуй Твои создания и меня многогрешного.

ԺԷ

Մոլորեալների՛ն դարձի բերող [Աստուած], ե՛տ դարձրու ինձ իմ չար սովորութիւններից բարի սովորութեան եւ բեւեռի՛ր իմ հոգում մահուան սոսկալի օրը եւ գեհենի երկիւղը եւ արքայութեան սէրը, որպէսզի զղջամ մեղքերս եւ գործեմ արդարութիւն: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԸ

Աղբի՛ւր անմահութեան, բխեցրո՛ւ իմ սրտից ապաշխարութեան արտասուք, ինչպէս պոռնիկից, որպէսզի լուանամ իմ հոգու մեղքերը աշխարհից ելնելուց առաջ: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԺԹ

Պարգեւի՛չ ողորմութեան, պարգեւի՛ր ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ Քո սուրբ Մարմնի եւ Արեան հաղորդութեամբ գալ Քեզ մօտ: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

XVII

Обращающий заблудших! Обрати меня от нечестивых поступков к поступкам добродетельным и запечатлей в душе моей ужасный день смерти и страх перед геенной и любовь к Царству, дабы я покаялся в грехах и творил праведность. И помилуй Твои создания и меня многогрешного.

XVIII

Источник бессмертия! Источай слезы раскаяния из сердца моего, как из блудницы, дабы омылись грехи мои прежде моего ухода из этого мира. И помилуй Твои создания и меня многогрешного.

XIX

Даритель милости! Даруй мне прийти к Тебе в православной вере и с добрыми делами и причастившись святого Тела Твоего и Крови Твоей. И помилуй Твои создания и меня многогрешного.

Ի

Բարերա՛ր Տէր, ինձ բարի հրեշտակի յանձնիր քաղցրութեամբ աւանդելու իմ հոգին եւ անխռով անցնելու դեւերի չարութեան միջով, որոնք երկնքի ներքոյ են: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԻԱ

Լո՛յս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորի՛ր իմ հոգին՝ կոչման օրը ուրախութեամբ տեսնել Քո փառքի լոյսը եւ յոյսով յանգչել բարիների օթեւաններում՝ արդարների [հետ], մինչեւ Քո գալստեան Մեծ Օրը: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԻԲ

Դատաւո՛ր արդար, երբ գաս Հօր փառքով դատելու կենդանիներին եւ մեռեալներին, Քո ծառայի հետ դատաստանի մէջ մի՛ մտնիր, այլ փրկի՛ր ինձ յաւիտենական հրից եւ ինձ լսելի՛ արա արդարների՝ երանաւէտ կոչումը դէպի երկնքի արքայութիւն: Եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

XX

Господь Благодетельный! Препоручи меня доброму ангелу, дабы мне, утешившись, отдать душу и невозмутимо миновать козни дьявольские, которые под небом. И помилуй Твои создания и меня многогрешного.

XXI

Свет истинный Христос! Удостой душу мою с радостью узреть славу света Твоего в призывный день и упокоиться в благостной надежде в обители праведников до Великого Дня пришествия Твоего. И помилуй Твои создания и меня многогрешного.

XXII

Праведный Судья! Когда придешь в славе Отца судить живых и мертвых, не введи в судилище раба Твоего, но избави меня от вечного огня и дай мне услышать Блаженный зов праведников в Царство Твое небесное. И помилуй Твои создания и меня многогрешного.

ԻԳ

Ամենողո՛րմ Տէր, ողորմի՛ր բոլոր Քեզ հաւատացողներին, հարազատներիս եւ օտարներին, ծանօթներին եւ անծանօթներին, կենդանիներին եւ մեռեալներին. թողութի՛ւն շնորհի՛ր նաեւ իմ թշնամիներին եւ ինձ ատողներին իմ դէմ գործած յանցանքների համար եւ դարձրո՛ւ նրանց չարիքներից, որ ունեն իմ դէմ, որպէսզի Քո ողորմութեանն արժանի լինեն: Եւ ողորմիր Քո արարածներին եւ ինձ բազմամեղիս:

ԻԴ

Փառաւորեա՛լ Տէր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները եւ ի բարի՛ կատարիր իմ խնդրանքները՝ բարեխօսութեամբ սրբուհի Աստուածածնի եւ Յովհաննէս Մկրտչի եւ սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ մեր սուրբ հօր Գրիգոր Լուսաւորչի եւ սուրբ առաքեալների, մարգարէների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնաւորների, կոյսերի, միանձանց եւ Քո բոլոր երկնաւոր եւ երկրաւոր սրբերի: Եւ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

XXIII

Всемилостивый Господь! Помилуй всех верующих в Тебя — моих и чужих, знакомых и незнакомых, живых и мертвых; даруй и моим врагам и ненавидящим меня прощение, что совершили против меня, и обрати их от зла которое имеют ко мне, чтобы милости Твоей удостоились. И помилуй Твои создания и меня многогрешного.

XXIV

Господь восхвалимый! Внемли мольбам раба Твоего и исполни к добру прошения мои заступничеством Пресвятой Богородицы, и Иоанна Крестителя, и святого первомученнка Стефана, и святого отца нашего Григора Просветителя, и святых апостолов и пророков, учителей и мучеников, патриархов и отшельников, дев, подвижников и всех святых Твоих — небесных и земных. И Тебе Слава и поклонение, нераздельной Святой Троице во веки веков. Аминь.

Ի՞ՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ԴՐԱՄՈՎ

ՍՆՈՒՆԴ, ԲԱՅՑ ՈՉ ԱԽՈՐԺԱԿ
ՄԱՀԻՃ, ԲԱՅՑ ՈՉ ՔՈՒՆ
ԴԵՂ, ԲԱՅՑ ՈՉ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ
ՁԱՐԴ, ԲԱՅՑ ՈՉ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ
ՀԱՃՈՅՔ, ԲԱՅՑ ՈՉ ՍԷՐ
ԽՐԱԽՃԱՆՔ, ԲԱՅՑ ՈՉ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ
ԾԻԾԱՂ, ԲԱՅՑ ՈՉ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ՀԱՆԳՍՏԱՒԷՏՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ՈՉ
ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ
ՈՒՍՈՒՄ, ԲԱՅՑ ՈՉ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ
ԳԻՐՔ, ԲԱՅՑ ՈՉ ԽԵԼՔ
ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ՈՉ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ՈՉ
ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ
ՊԱՇՏՕՆ, ԲԱՅՑ ՈՉ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
ՏՈՒՆ, ԲԱՅՑ ՈՉ ԸՆՏԱՆԻՔ
ԽԱՉ, ԲԱՅՑ ՈՉ ՓՐԿԻՉ:

ԻՆՉ ԱՆՀՆԱՐ Է ԳՆԵԼ ԴՐԱՄՈՎ
ԱՅԴ ԲՈԼՈՐԸ ԵՒ ԱՒԵԼԻՆ՝ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ
ԿԵԱՆՔԸ,
ՄԵՐ ՏԷՐԸ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ
ՇՆՈՐՀՈՒՄ Է ԱՆՀԱՏՈՅՑ,
ՄԻԱՅՆ ԹԷ ՀԱՒԱՏԱՍ
ԵՒ ԱՂՕԹՔՈՎ ԽՆԴՐԵՍ ՆՐԱՆԻՑ:

ЧТО МОЖНО КУПИТЬ ЗА ДЕНЬГИ?

ПИЩУ, НО НЕ АППЕТИТ;
КРОВАТЬ, НО НЕ СОН;
ЛЕКАРСТВО, НО НЕ ЗДОРОВЬЕ;
УКРАШЕНИЯ, НО НЕ КРАСОТУ;
УДОВОЛЬСТВИЕ, НО НЕ ЛЮБОВЬ;
ПРАЗДНИК, НО НЕ СЧАСТЬЕ;
СМЕХ, НО НЕ РАДОСТЬ;
ПОКОЙ, НО НЕ УМИРОТВОРЕННОСТЬ;
ОБРАЗОВАНИЕ, НО НЕ МУДРОСТЬ;
КНИГИ, НО НЕ РАЗУМ;
ЗНАНИЕ, НО НЕ ИСТИНУ;
ДОЛЖНОСТЬ, НО НЕ ОБЕСПЕЧЕННОСТЬ;
ЗНАКОМСТВО, НО НЕ ВЕРНОСТЬ;
ДОМ, НО НЕ СЕМЬЮ;
КРЕСТИК, НО НЕ СПАСИТЕЛЯ.

ВСЁ, ЧТО НЕВОЗМОЖНО
КУПИТЬ ЗА ДЕНЬГИ,
ВСЁ ЭТО И БОЛЕЕ ТОГО - ЖИЗНЬ ВЕЧНУЮ
ГОСПОДЬ НАШ ИИСУС ХРИСТОС
ДАЁТ ДАРОМ,
ТОЛЬКО ВЕРЬ ЕМУ
И МОЛИТВОЙ ПРОСИ У НЕГО.